

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
(վեց հատորով)

Ուղիղ մեկ տարի առաջ, երբ մենք ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի մի շարք դասախոսներով Սիսիանում մասնակցում էինքնույն ամբիոնի պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի և Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի նախաձեռնությամբ հրավիրված սիսիանցի աշխարհահռչակ հայագետ-բյուզանդագետ, հայ վերլուծական պատմագրության հիմնադիր Նիկողայոս Աղոնցի ծննդյան 140-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսին, հուրախություն բուրի Պ. Հովհաննիսյանը հայտարարեց, որ 2012 թվականին կիրատարակվեն Ն. Աղոնցի երկերի 5-րդ և 6-րդ հատորները և կամբողջանա նրա գիտական վաստակի մեծագույն մասը: Իսկապես, 2006-2012 թթ. ընթացքում անվանի աղոնցագետ պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի շնորհիվ Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը (տնօրեն՝ Պերճ Ստեփանյան), «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության» հայկական բաժանմունքի ղեկավար, դոկտոր Ջավեն Եկալյանի սիրահոժար նախաձեռնությամբ ու նյութական աջակցությամբ ընթերցող լայն հասարակությանը և գիտական հանրությանը մատուցեց հայ ականավոր պատմաբան, բանասեր, բյուզանդագետ, կովկասագետ Նիկողայոս Աղոնցի գրավոր ժառանգությունը՝ երկերի վեց հատորով¹:

Ն. Աղոնցի երկերի հրատարակչությունը կարևոր ներդրում է ոչ միայն հայ պատմագիտության, այլև համաշխարհային գիտության ասպարեզում: Բազմիցս ձեռնանուխ են եղել նրա երկերի հրատարակմանը, բայց չի հաջողվել, որովհետև Աղոնցը գրել է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, հունարեն, տպագրվել է Պետերբուրգում, Բյուսելում, Փարիզում, Լիսաբոնում, Բոստոնում, Լոնդոնում և այլուր: Բազմազան է նաև Աղոնցի ուսումնասիրությունների ոլորտը՝ պատմագիտություն, բանասիրություն, լեզվաբանություն, բնագրագիտություն, կրոն, արվեստի տարբեր ճյուղեր, բյուզանդագիտություն: Տեղին է խոստովանել, որ տարիներ շարունակ որոշ աշխատանք այնուամենայնիվ կատարվել է Ն. Աղոնցի գիտական ժառանգության հրատարակման ուղղությամբ: Դեռևս նրա կենդանության օրոք պատրաստված առաջին ժողովածուն լույս տեսավ միայն մահվանից հետո՝ 1948 թվականին: 1960-ական թվականներից հետո միայն կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին Ն. Աղոնցի առանձին գործերի հրատարակման ուղղությամբ, որոնցից էր պատմաբանի ստեղծագործությունների գլուխգործոցը՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեծածավալ մենագրությունը ռուսերեն 1971 թ., իսկ հայերեն թարգմանությամբ հրատարակվել է 1987 թ.: Այն դուրս է մնացել վեց հատորյակից Ն. Աղոնցի սևագիր, անմշակ որոշ ուսումնասիրությունների, հրապարակախոսական երկասիրությունների, նամակների և մի քանի մանր հետազոտությունների հետ միասին,

¹ Տե՛ս Նիկողայոս Աղոնց, Երկերվեց հատորով, հատ. Ա. (Պատմագիտական ուսումնասիրություններ), Երևան, 2006, 652 էջ: Հատ. Բ (Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ), Երևան 2006, 608 էջ: Հատ. Գ (Հայերենագիտական ուսումնասիրություններ), Երևան, 2008, 688 էջ: Հատ. Դ (Քննական պատմություն հայոց), Երևան, 2009, 720 էջ: Հատ. Ե (Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ), Երեվան, 2012, 620 էջ: Հատ. Զ (Հրապարակախոսություն), Երևան, 2012, 540 էջ:

որոնք ցրված են եվրոպական և հայկական մամուլի էջերում: Անհրաժեշտ է ընդգծել, որ առաջին անգամ է հրատարակվում ականավոր հայագետի երկերի համահավաքը՝ վեց հատորով, որը իսկապես երևույթ է մեր իրականության մեջ: Հիշատակված փաստերը բավական են պատկերացում կազմելու համար, թե ինչ մեծ ծավալի գիտահետազոտական մանրակրկիտ ու տքնաջան աշխատանք է կատարել պրոֆեսոր Պ. Հովհաննիսյանը Բեյրութում գտնվող մեծավաստակ գիտնականի թողունում գտնվող նյութերն ու ուսումնասիրություններն ի մի բերելու, դասակարգելու, արտասահմանյան և տեղական, օտարալեզու և հայկական ամսագրերում ու մամուլում տպագրված հոդվածները հավաքելու, թարգմանելու, համակարգելու և դրանք համահավաք հատորներով հրատարակության պատրաստելու ուղղությամբ:

Ն. Ադոնցի կյանքի ուղին և գիտական ժառանգությունն այսօր էլ շարունակում են մնալ հետազոտողների հետաքրքրության շրջանակներում, ուսանելի մնալ գիտության ապագա նվիրյալների համար: Մեծանուն գիտնականը հազվադեպ ինքնատիպությամբ օժտված անհատականություն էր, որ իր անձնավորության մեջ միավորում էր միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխանող մտածողին, խոհուն հետազոտողին և միաժամանակ նվիրյալ հայ մարդուն, սեփական սկզբունքներին մինչև վերջ հավատարիմ հայրենասերին: Բնութագրելով Ն. Ադոնցի դերը պատմագրության մեջ՝ պրոֆեսոր Պ. Հովհաննիսյանը գրում է. «Նա այնպիսի դեր խաղաց պատմագրության մեջ, ինչպես Հ. Թումանյանը գրականության, Ա. Թամանյանը ճարտարապետության, Վ. Սուրենյանցը նկարչության, Հր. Աճառյանը լեզվաբանության, Մ. Աբեղյանը գրականագիտության, Վիկտոր Համբարձումյանն աստղագիտության մեջ»¹: Ն. Ադոնցի շատ ուսումնասիրություններ դուրս են եկել ազգային պատմության շրջաններից և դարձել հանրնդիանուր պատմագիտությունը հարըստացնող արժեքներ: Տարիներ շարունակ /1904-1920/ դասավանդելով Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում և զլխավորելով Բոյոսելի Ազատ համալսարանի հայագիտության ամբիոնը /1932-1942/ Ադոնցը հիանալի հնարավորություն ունեցավ մոտիկից ծանոթանալու համաշխարհային պատմագիտական կենտրոններում կատարվող աշխատանքներին և դրանց լավագույն արդյունքները ներդնելու իր ստեղծագործությունների մեջ: Շուրջ 50-ամյա (1895-1940) գործունեության ընթացքում նա թողել է 100-ից ավելի ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են հայագիտության համարյա բոլոր բնագավառներին, ոչ միայն պատմագիտությանը, բանասիրությանը, լեզվաբանությանը, բնագրագիտությանը, այլև կրոնի, եկեղեցու և արվեստի, հայկական հարցի ու հասարակական մտքի պատմությանը, պատմական աշխարհագրությանը և այլն:

Բազմավաստակ գիտնականի պատմագիտական ուսումնասիրությունների մեծ մասն ամփոփված է Ա հատորում: Այստեղ ընդգրկված են այն ուսումնասիրությունները, որոնք ժամանակին տպագրվել էին Բոստոնի «Հայրենիք» ամսագրում, ապա՝ Ա. Խոնդկարյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Պատմական ուսումնասիրություններ» հատորում: Այստեղ է ընդգրկվել Ն. Ադոնցի պատմագիտական առաջին աշխատանքը, որը լույս է տեսել 1904 թ.՝ նվիրված մարզպան Վասակի խնդրին: Սույն փոքրածավալ ուսումնասիրությունը մեծ արձագանք գտավ պատմա-բանասիրական մտքի և ընթերցող հասարակայնության լայն շրջաններում: Անկախ հոդվածի

¹ Տես **Նիկողայոս Ադոնց**, Երկեր, Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2006, էջ 7:

վիճաբանական միտումներից՝ այն մատնանշում էր հեղինակի պատմագիտական լուրջ պատրաստվածությունը, գիտելիքների խորությունը և գիտության մեջ նոր խոսք ասելու հաստատականությունը: «Մարզպան Վասակը պատմաբանների դատի առաջ» և այս դատին եղիշեիու Փարպեցու կողքին, որպես արդարախոս վկաներ, ականավոր պատմաբանն ասպարեզ է հանել Կորյունի նու խորենացուն: Եթե առաջինները չէին տեսնում Վասակի ապրած կյանքում որևէ լուսավոր կետ, ապա Կորյունն ու խորենացին Ավարայրի ճակատամարտից հետո պարզապես հարգանքի ու մեծարանքի խոսքերով են հիշում նրան: Հենց պատմիչների այս հակասական կարծիքների վրա հենվելով՝ բազմավաստակ պատմաբանը խոր քննության է ենթարկում պատմական իրողությունները: Ադոնցի Ա հատորում են ընդգրկվել այնպիսի կարևոր պատմական ուսումնասիրություններ, ինչպիսիք էին «Հին հայոց աշխարհայացքը», «Հայ հին շինականությունը», «Հայաստանի ոսկե հանքը», «Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ», «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում», «Բագրատունյաց փառքը», «Արտավան Արշակունի», «Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա», «Վարդ Մամիկոնյան», «Վասիլ Հայկազն», «Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը» և այլն: Այս ուսումնասիրություններից յուրաքանչյուրում կարելի է հանդիպել ականավոր հայագետի նոր ու համարձակ մտքերի: Ն. Ադոնցը երբեք չէր կրկնում ուրիշներին, ճանաչում էր միայն մեկ գերագույն ճշմարտություն՝ պատմական իրականության արդար ու ճշմարիտ խոսքը: «Բագրատունյաց փառքը» շքեղ աշխատության մեջ պատմաբանը քայլ առ քայլ ցույց է տալիս Բագրատունյաց տոհմի ասպետների ջանքերը՝ ուղղված հայ ժողովրդի միաձույլ ամբողջությունն ապահովելուն: Այստեղ Ադոնցի համար «ճշմարիտ հայրենասիրությունն ուրիշ նպատակ չունի, եթե ոչ ապահովելով հայրենիքին այնպիսի պայմաններ, որ նա կարողանա զարգանալ ազատորեն և իր բաժին ծաղիկը բերի համամարդկային քաղաքակրթության փնջին»¹: Նա հազար անգամ իրավացի էր, երբ պատմական փաստերից ու իրողություններից կատարում էր, միակ ճշմարիտ եզրակացությունը՝ համոզված, որ «Բագրատունյաց ծրագրերը չէին կարող ու չկարողացան հաղթահարել կովկասյան ազգերի իշխանավորների կենտրոնախույս ձգտումները, որոնք առավել անհաղթահարելի էին դառնում, որովհետև կային եկվոր օտարների բռնակալական հարվածները և տեղական ավատապետերին սնամեջ թագեր բաշխելու ճանապարհով նրանց իրար դեմ հանելու հին ու վարձված եղանակը»²:

Ն. Ադոնցի երկերի Բ հատորում զետեղված 32 ուսումնասիրություններից 22-ը մայր հայրենիքում լույս է տեսնում առաջին անգամ: Այդ հատորում ընդգրկվել են բանասիրության խնդիրներին նվիրված Ն. Ադոնցի հիմնական աշխատությունները: Նրա՝ իբրև գիտնականի առաջին հետաքրքրությունները վերաբերում էին հայ հին մատենագրության նշանավոր, դեմքերին՝ Փավստոս Բուզանդ, Մովսես Կաղանկատվացի, Անանուն, Կորյուն, Եզնիկ Կողբացի, Մովսես խորենացի և ուրիշներ: Հատորում զետեղված ուսումնասիրություններում իրեն հատուկ եզակի աշխատասիրությամբ, տաղանդի ուժով ու հմտությամբ Ն. Ադոնցը լուծել է բազմաթիվ առեղծված-

¹ **Նիկողայոս Ադոնց**, Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 498:

² Տես նույն տեղում, էջ 534:

ներ, նորովի մեկնաբանել հայ հին մատենագիրներից շատերի անձն ու գործերը և իր մնայուն նպաստը բերել հայ պատմաբանասիրությանը¹:

Ն. Ադոնցի երկերի Գ հատորը վերաբերում է հայերենագիտական ուսումնասիրություններին: Ինչպես նախորդ հատորները, այնպես էլ Գ հատորը ունի աշխատասիրողների ծանոթությունների բաժին: Այս հատորում զետեղված 14 ուսումնասիրություններից 13-ը մայր հայրենիքում լույս է տեսնում առաջին անգամ և ընդգրկում է քերականագիտական, լեզվագիտական, ավելի լայն առումով հայերենագիտությանը վերաբերող ուսումնասիրություններ: Ն. Ադոնցը տիրապետելով բազմաթիվ լեզուների՝ հունարեն (հին և նոր), լատիներեն, սանսկրիտ, պարսկերեն, թուրքերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն և ռուսերեն, հակառակ ուսուցչապետ Ն. Մառի սպասելիքների, հենց սկզբից չմտավ լեզվաբանության ասպարեզ: Մառը հատկապես խրախուսում էր իր այն սաներին, որոնք մասնավորապես զբաղվում էին բնագրագիտական, լայն առումով՝ բանասիրության և լեզվաբանության հարցերով: Սակայն այդ ժամանակ Ադոնցին առավելապես հետաքրքրում էին պատմագիտական խնդիրները և պատահական չէ, որ նրա մագիստրոսական թեզը՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (պաշտպանել է 1909 թ. ապրիլի 5-ին), նվիրված էր զուտ պատմագիտական նյութի՝ լեզվաբանական պրպտումների արդյունքների հիման վրա: Ն. Մառն այս հանճարեղ ուսումնասիրությունը բարձր է գնահատել «որպես հայագիտության հույժ նշանակալից երևույթներից մեկը»²: Մագիստրոսական թեզի պաշտպանությունից հետո Մառի պնդմամբ Ադոնցը ձեռնամուխ եղավ հայ և հույն բովանդակ քերականագիտական մտքի նշանակալից երևույթներից մեկի՝ Դիոնիսոս Թրակացու և նրա հայ մեկնիչների քերականագիտական գործերի մանրակրկիտ ուսումնասիրությանը: Երկարատև տքնաջան աշխատանքից հետո նա պաշտպանության ներկայացրեց իր դոկտորական թեզը, որի ընդդիմախոսներն էին Ն. Մառը և Ս. Ժեբելը: Միայն Ն. Մառի եզրակացությունը բավական է պատկերացում կազմելու թեզի կարևորության մասին: «Հայկական բանասիրության յուրաքանչյուր ուսումնասիրողի համար «Դիոնիսոս Թրակացին և հայ մեկնիչները», անկասկած, պետք է դառնա սեղանի գիրք»,- եզրակացրել է Ն. Մառը³: Իրոք, Ն. Ադոնցի այս աշխատությունը կարևոր դեր խաղաց հայ քերականագիտական մտքի, հունաբան դպրոցի և հարակից խնդիրների հետագա ուսումնասիրության բնագավառում: Ահա թե ինչու անհրաժեշտություն էր դարձել սույն երկասիրության նաև հայերեն նոր թարգմանությունը, որը կծառայի որպես սուղեցույց հայ քերականագիտական մտքի համակողմանի ուսումնասիրության համար: Բացի այս հանճարեղ երկասիրությունից հատորում տեղ են գտել հայոց լեզվի ուղղագրությանը նվիրված Ն. Ադոնցի «Գրական նշմարներ. լեզվական ուղղագրական» (1904), «Ուղղագրական և տառերի բարեփոխության հանձնաժողովին» (1927) ծրագրային հոդվածները, քերականագիտական մի քանի աշխատությունների վերաբերյալ լույս տեսած գրախոսություններ և ստուգաբանական աշխատություններից երեքը:

1946 թ. Փարիզում հետմահու լույս տեսավ Նիկողայոս Ադոնցի «Հայաստանի պատմություն: Ակունքները X-VI դդ. ք. ա.» սովորածավալ ֆրանսերեն աշխատությունը, որը ներկայացնում էր նշված ժամանակաշրջանի հայ ժողովրդի քաղաքա-

¹ Նիկողայոս Ադոնց, Երկեր, Բ, Երևան, 2006, էջ 5:

² Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Գ., Երևան, 2008, էջ 6:

³ Նույն տեղում:

կան պատմության և ներքին կյանքի մանրամասները: Ինչպես ցույց են տալիս փաստերը, Ն. Ադոնցը երբեք նպատակ չհունեցել հատուկ զբաղվելու Ուրարտուի պատմության ուսումնասիրությամբ և սա չպետք է դիտել նշված պարագծում: Նրա կյանքի մեծ ուլեհ նպատակն է եղել ստեղծել «Հայոց քննական պատմության» մի բազմահատոր աշխատություն, որը բոլոր առումներով նորույթ կլիներ բովանդակ հայագիտական գրականության մեջ և կհամապատասխաներ եվրոպական չափանիշներին՝ օտարներին ներկայացնելով հայ ժողովրդի գիտական անաչառ պատմության լուսաբանումը: Համընդհանուր հայոց պատմության գիրք ստեղծելու գաղափարը Ադոնցը մտահղացել է դեռևս 1920-ական թթ. վերջերին, երբ Փարիզում գործող Սանասարյան ժողովրդական համալսարանի ուսանողների համար վարում էր «Հայոց պատմություն» դասընթացը: Տարիների ընթացքում դասընթացի նյութերն սկսում է դասակարգել և ենթարկել ընդհանուր համակարգի, թեև «Հայոց պատմության» ստեղծման աշխատանքները կանոնավոր ու հետևողական ընթացքի մեջ դնելու ուղղությամբ որևէ գործնական քայլ չի ձեռնարկում: Հայոց պատմություն շարադրելու Ն. Ադոնցի ծրագիրը հավանության արժանացավ Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախմբի կողմից. «Հանձնաժողովը միաձայն որոշեց տպագրել հայոց հնագույն պատմության վերաբերյալ պրոֆ. Ն. Ադոնցի աշխատությունը», որը պետք է կազմեր «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի առաջին հատորը:

Ն. Ադոնցին առաջարկվեց միաժամանակ կազմակերպել ֆրանսերեն բազմահատորյակի հայերեն թարգմանության գործը: 1938 թ. նա հրատարակել է 11 անուն ուսումնասիրություն, որից վեցը ֆրանսերենով, այդ թվում՝ «Սամուել հայը բուլղարների թագավոր» մենագրությունը, ապա 1939 թ. ընդամենը երկու հոդված, իսկ 1940 և 1941 թթ. և ոչ մեկը: Անգամ մերժել է «Հայրենիք» ամսագրի՝ «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի առթիվ հատուկ հոդված գրելու առաջարկը: Նա նախաձեռնեց Հայաստանի քննական պատմության «ամենից դժվար մասը՝ Հայաստանի հին պատմությունը»: Աշխատության առաջին հատորի մեքենագիր օրինակը պատրաստ էր, երբ 1942 թ. հունվարի 27-ին Ն. Ադոնցը կնքեցիր մահկանացուն: Միայն նրա մահից հետո՝ 1946 թ. կեսերին հրատարակվեց «Հայոց քննական պատմության» առաջին մասը, որը կրում էր «Հայաստանի պատմության ակունքները» խորագիրը: Աշխատանքն ավարտվում է «Ուրարտուի վախճանը և նրա պատմական դերը» եզրափակիչ հատվածով, որին Հ. Ջավրյանը որպես հավելված ավելացրել է Ն. Ադոնցի «Հայերի ծագումը» անավարտ ուսումնասիրությունը, ինչպես նաև ամբողջական տեսք ունեցող «Ասուրական արշավանքներն Ուրարտուի դեմ», «Հայաստանը Ք.ա. IV-I դարերում», «Կրասոսն ընդդեմ պարթևների (ըստ սկզբնաղբյուրների)», «Հայաստանը հռոմեա-պարթևական հակամարտության ոլորտում Ք.ա. IV դ.-III դարի սկիզբ» և «Բյուզանդա-պարսկական հարաբերություններն ու Հայաստանը (V դարի վերջից – VI դարի կես, թարգմանեց՝ Օ. Վարդապարյանը)»:

Ն. Ադոնցի Ե հատորն ամփոփում է նրա բյուզանդագիտական ժառանգությունը: Համաշխարհային գիտական հանրությունը Ն. Ադոնցին ճանաչում է որպես շնորհաշատ բյուզանդագետ: Զբաղվելով հայրենի պատմությամբ՝ նա գրեթե միշտ աչքի առաջ է ունեցել բյուզանդական աղերսները: Ավելի ստույգ ասած՝ նա անընդհատ փնտրում էր միաժամանակ և «Բյուզանդիան՝ Հայաստանում» և «Հայաստանը՝ Բյուզանդիայում»՝ քաջ գիտակցելով, թե որքան միահյուսված էին նրանց ճակատագրերը:

Ն. Ադոնցը առաջին հայ բյուզանդագետն էր: Մինչ նրա ասպարեզ գալը հայ պատմագիտությունը միայն հպանցիկ աղերսներ է ունեցել բյուզանդագիտության հետ: Առանձին հարցեր քննարկման նյութ են դարձել հայ ժողովրդի ընդհանուր պատմությանը մվիրված ուսումնասիրություններում (Մ. Չամչյան, Ստ. Պալասանյան և այլն), սակայն չկար մեկը, որը պատշաճ մասնագիտական պատրաստվածություն ունենար և ճանաչված լիներ միջազգային գիտական հանրության կողմից: Երկրորդն այն է, որ Ն. Ադոնցն անում էր ամենայն հնարավորը համոզելու բյուզանդագետների հետնորդներին, որ Բյուզանդիայի վերաբերյալ հայկական աղբյուրները ոչ պակաս արժանի են ուշադրության, քան «դասական» եվրոպական կամ արևելյան լեզուներով գրվածները, երբեմն նույնիսկ նախընտրելի են: Շեշտելով Ն. Ադոնցի բյուզանդագիտությանը բերած այս նորությունը՝ Ժ. Գարիտը գրում է. «Ամհնար է ձեռնամուխ լինել Եգիպտոսի, Ասորիքի, Հայաստանի կամ Վրաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրությանն առանց հիմնվելու բյուզանդական աղբյուրների վրա: Նմանապես անհնար է շարադրել Բյուզանդիայի պատմությունն առանց հաշվի առնելու ղըպտիական, ասորական, հայկական և վրացական աղբյուրները: Ահա թե ինչու Ն. Ադոնցը լայնորեն օգտագործում էր հայկական պատմիչներին, որոնց երկասիրությունների բնագրերը բյուզանդագետներից քչերն են ի վիճակի կարդալ»:

Հատորում լույս տեսած 24 ուսումնասիրություններից 22-ը Մայր հայրենիքում լույս են տեսնում առաջին անգամ: Հատորում տեղ են գտել ոչ միայն Լիսաբոնում լույս տեսած պատմաբանի բյուզանդագիտական ժառանգությունն ամփոփող ժողովածուի 18 ուսումնասիրությունները, ինչպես նաև «Կասիա Միանձնուհին և հայերը» և «Հայ գիտական դեմքերը Բյուզանդիայում» երկասիրությունները: Հատորի հավելվածում անհրաժեշտ է համարվել տեղադրել «Լազիկա և Բյուզանդիա» արխիվային չտպագրված նյութը և Ա. Գրեգուարի ու Ն. Ադոնցի հեղինակությամբ լույս տեսած «Նիկեփորոս-Ծուռվիզ» հետաքրքրական հոդվածը:

Ադոնցի երկերի Զ հատորը համարյա ամբողջությամբ ամփոփում է հրապարակախոսության բնագավառում կատարած աշխատանքները: Այստեղ գետնդված 32 նյութերից միայն 16-ն էին նախապես լույս տեսել «Հայկական հարց» ժողովածուում (1996), որը տպագրության էր պատրաստել Պ. Հովհաննիսյանը, մյուսները հրատարակվում են առաջին անգամ, մի քանիսն էլ թարգմանություններ են ռուսերենից: Այդ աշխատանքները ստեղծվել են կոնկրետ միջավայրում պատմական այս կամ այն իրադարձությունների լույսի ներքո: Լինելով գործուն անհատ՝ նա անմիջականորեն մասնակցել է հայկական հարցի քննարկումներին կամ պատմական որևէ դեպքի մասնակից է և այդ ամենը գրի է առել իր «Հայկական հարցի շուրջ թուրքիայում», «Հայկական հարցը Սևրում», «Հայաստանի սահմանների խնդիրը» և այլ արժեքավոր ուսումնասիրություններում, որոնք էլ ամփոփված են այս հատորում: Վերլուծելով պատմական իրադարձությունները՝ նա կայացնում է կոնկրետ եզրահանգումներ:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ Պ. Հովհաննիսյանը հրատարակելով Ն. Ադոնցի հատորները՝ կատարել է երախտագիտության և դրվատանքի արժանի գործ, որի անհրաժեշտությունը զգում էր ժամանակակից գիտական սերունդը:

Էդիկ Մինասյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր